

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Երկուշաբթի, 17 Մարտի, 2008

Հայ Օգնության Միության Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան «Ջաւախք» հիմնադրամի յանձնախմբի կազմակերպութեամբ Մարտի 9-ի երեկոյեան, «Քրիսթալ» նաւի վրայ տեղի է ունեցել հանգանակային յատուկ ձեռնարկ, որի արդիւնքում հանգանակուել է շուրջ 60,000 դոլար, որը տրամադրուելու է ջաւախքահայութեան առողջապահական, ընկերային եւ երիտասարդական ծրագրերի իրագործմանը: Այս չորրորդ նաւապտոյտի ձեռնարկին ներկայ են եղել Յ.Յ.Ղ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի, Ազգային Առաջնորդարանի, ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան ինչպէս նաեւ ՀՕՄ-ի մասնաճիւղերի ներկայացուցիչները եւ շուրջ 200 հիւրեր: Միջոցառմանը ելոյթ է ունեցել «Ջաւախք» հիմնադրամի յանձնախմբի փոխատենապետուհի՝ Լենա Պոզոյեանը, որը խօսելով ջաւախքահայերի առջեւ ծառայած դժուարութիւնների մասին, կարեւորել է նրանց անմիջական օգնութիւն հասցնելու գործը, որը,- ասել է նա,- կարող է մասամբ մեղմել նաեւ ջաւախքահայութեան մօտ առաջացած ծայր աստիտան յուսալքութիւնը: Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ Լոս Անջելոսի UCLA համալսարանի հանրային առողջապահութեան պրոֆեսոր, դոկտ. Ալիմա Դուրեանը, որը խօսելով իր Ջաւախք կատարած այցելութեան մասին, մասնաւորաբար անդրադարձել է Ջաւախքի հիւանդանոցների եւ բուժկենտրոնների անբարենպաստ պայմաններին եւ շրջանում մեծացող գործազրկութեան չափերին: «Հայրենասիրութիւնը չի ծաղկում ծաղկամանում, այլ հող է պահանջում: Մենք այդ հողն է, որ պէտք է պահենք»,- իր խօսքը եզրափակել է դոկտ. Դուրեանը:



Սան Ֆրանցիսկոյի «Գռուզեան-Ջաքարեան-Վասպուրական» ազգային վարժարանի հայկական բաժինը եւս կազմակերպել է «Օգնենք Ջաւախքին» բնաբանով յատուկ միջոցառում, որը տեղի է ունեցել Ուրբաթ, Փետրուարի 15-ին Սան Ֆրանցիսկոյի Հայ կենտրոնում: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Յովան Թաշճեանը, որ իր տպաւորութիւնները պատմելով վերջերս Ջաւախք կատարած այցելութեան մասին, հանգամանօրէն անդրադարձել է ջաւախքահայութեան դիմագրաւած մարտահրաւերներին: «Պատմութիւնը մեզ չի ների, եթէ թոյլ տանք, որ հայրենի այդ սրբազան հողատարածքը հայաթափուի, որի համար պատասխանատու ենք մենք բոլորս՝ եւ Հայաստանի իշխանութիւնները, եւ հայրենի ու Սփիւռքի հայութիւնը որպէս մէկ ամբողջութիւն»,- ասել է Յովան Թաշճեանը: Միջոցառմանը գործադրուել է նաեւ գեղարուեստական ծրագիր՝ «Գռուզեան-Ջաքարեան-Վասպուրական» ազգային վարժարանի աշակերտութեան կատարմամբ:



Շաբաթ, Մարտի 8-ին տեղի է ունեցել ՀՀՊ Սան Ֆրանցիսկոյի Հայ Դատի Յանձնախմբի տարեկան ճաշկերոյթ-հաւաքը, որի ընթացքում ելոյթ է ունեցել Միացեալ Նահանգների Կոնգրէսի առաջիկայ ընտրութիւններին իր թեկնածութիւնը առաջադրած հայազգի Ջէքի Սփիրը, խոստանալով հետապնդել ամերիկահայութեանը յուզող հարցերը Կոնգրէսում: «Երբ Կոնգրէսի անդամ ընտրուեմ, ամերիկահայութեան ներկայացուցչութեան կենտրոնը այստեղ է լինելու», ասել է նա: Խօսելով իր հայկական արմատների մասին, Ջէքի Սփիրը պատմել է, թէ ինչպէս Հայոց Ցեղասպանութեան մասին լսել է իր մայրիկից եւ թէ ինչպէս բազմաթիւ անգամներ կարդացել է դեսպան Հենրի Մորգինթաուի այն հեռագիրը, ուր դեսպանը Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեանը տեղեկացնում էր զանգուածային ջարդերի մասին: «Շատերը մեզ ասում են, թէ պէտք է մոռնանք Հայոց Ցեղասպանութիւնը, որոնցից մէկն է Միացեալ Նահանգների ներկայիս արտաքին գործերի նախարար Քոնդոլիզա Ռայսը, բայց մենք չենք մոռնայ: Արդարութիւն ենք պահանջում եւ իբրեւ պատմութեան հետեւորդներ, գիտենք, որ աշխարհը շատ անելի վտանգաւոր վայր կը լինի բոլորի համար, եթէ շարունակուի անտեսուել Հայոց Ցեղասպանութիւնը», յայտարարել է Ջէքի Սփիրը,

դատապարտելով Հայոց Ցեղասպանութեան փաստը պաշտպանող դեսպան Ջան Էլընզիմ պաշտօնագրկելու վաշինգտոնի որոշումը:



ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները Երեքշաբթի, Մարտի 18-ին Լոս Անջելոսում հանդիպում են ունեցել Միացեալ Նահանգների Կոնգրեսում Կալիֆորնիայի թիւ 31 ընտրատարածքը ներկայացնող կոնգրէսական Հաւիէ Բէտրայի հետ, քննարկելով ամերիկահայութեանը յուզող մի շարք հարցեր, որոնց թւում՝ Հայոց Ցեղասպանութեանը վերաբերող թիւ 106 բանաձեւը, Հայաստանին տրուող ամերիկեան օժանդակութիւնը եւ հակառակ թուրքական ճնշումներին ցեղասպանութեան մասին հասարակութեանը իրազեկ պահելու Հայ Դատի կողմից գործադրուող ջանքերը: «Կոնգրէսական Բէտրան սկզբունքի տէր դեկավար եւ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի հզօր պաշտպաններից է»,- հանդուպումից յետոյ յայտարարել է Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գործադիր տնօրէն Անդրանիկ Քիզիրեանն ու աւելացրել,- «Համաշխարհային առումով ցեղասպանութիւնը խարազան է համայն մարդկութեան համար: Իսկ մենք պէտք է շարունակենք իրազեկ պահել երկրի ընտրովի պաշտօնատարներին, թէ ինչո՞ւ նրանք չպէտք է ընկրկեն Թուրքիայի կողմից հնչեցուող սպառնալիքների դիմաց»: Նշենք, որ կոնգրէսական Բէտրան օգնականի պաշտօնով համագործակցում է Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի խօսնակ Նանսի Փիլոսի հետ եւ մաս է կազմում Ներկայացուցիչների պալատի յատկացումների հարցերով յանձնախմբին:



Ուրբաթ, Մարտի 7-ին, Միշըն Հիլզ քաղաքի «Արարատ» Տարեցների Տան «Դէօքմէճեան» սրահում կազմակերպուծ ճաշկերոյթ-հաւաքով նշուել է Հ.Ս.Ը.Մ.-ի Քրեւենթա հովիտի «Շանթ» մասնաճիւղի հիմնադրութեան 15-ամեակը, որին ներկայ են գտնուել մեծ թիւով Հ.Ս.Ը.Մ.ականներ, համակիրներ եւ հիւրեր: Միջոցառմանը ելոյթ է ունեցել մասնաճիւղի վարչութեան ատենապետ Ալէք Արարատեանը, որը հակիրճօրէն անդրադարձել է մասնաճիւղի 15 տարուայ գործունէութեանն ու ձեռք բերած նուաճումներին: Այնուհետեւ տեղի է ունեցել տարուայ լաւագոյն սկսուտի եւ մարզիկի պարգէւատրման արարողութիւնը, որին հետեւել է տօնական խրախմբանք:



Ձատկական տօնի առթիւ, Երեքշաբթի, Մարտի 11-ին, Միացեալ Նահանգների Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտրեանը այցելել է Լոս Անջելոսի «Թուին թաու-ըրզ» բանտը, ուր հանդիպել է հայ բանտարկեալներին եւ կրօնական արարողութիւն կատարել նրանց համար: Առաջնորդ Սրբազան հօրը ընկերակցել է Լոս Անջելոսի ոստիկանապետ Լի Բաքան, որը դրուատանքով է արտայայտուել իր եւ առաջնորդարանին միջեւ ամրագրուած սերտ գործակցութեան մասին եւ շնորհակալութեան յայտնել ասել այս այցելութեան համար:

Այս լուրերը տրամադրուծ են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: